

ՄՈՆԹԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԱԾ

Հայաստանի Ազատագրության Գաղտնի Բանակի նախկին ղեկավարներէն եւ Ազատագրության Շարժումի հիմնադիր Մոնթէ Մելքոնեան ֆրանսական բանտէն ազատ արձակուեցաւ չորս տարուան բանտարկութեան շրջանի անարտէն ետք:

Ամերիկահայ Մելքոնեան Ֆրանսայի մէջ ձերբակալուած էր 30 նոյեմբեր 1985ին եւ դատապարտուած վեց տարուան բանտարկութեան 12 Գեկտեմբեր 1986ին (որուն երկու տարին՝ առկախումով):

Հայ երիտասարդը մինչեւ վեց օր պիտի պահուէր վարչական հսկողութեան տակ, մինչեւ որ դատաւորը որոշէր անոր ճակատագիրը - Արտաքսում դէպի Միացեալ Նահանգներ կամ Ֆրանսայի մէջ կեցութիւն հսկողութեան պայմաններով:

Մելքոնեանի եւ «Գաղտնի Բանակ»ի «Յակոբ Յակոբեան»ի միջեւ տարակարծութիւնը խորացաւ Օրլիի օդակայանի եղեռնափորձէն ետք: Յակոբեան մահուան դատապարտած էր իր նախկին գործակիցը: Մելքոնեան ձերբակալուած էր երբ գաղտնօրէն Ֆրանսա մտած էր Ճորճիու Տիմիդրիու կեղծ անունով: